

տած մանկախնամներ և դաստիարակչուհիներ, սրբան աւելի զգալի է մեզանում հանոնաւոր ընտանեկան վարժուհիների կարիքը: մեղանում, ուր երեկուայ ազէա զիւղացին, խղճուի և անաաշ գեղճիուհին, կոպիա զարաբաղցի, շամախեցի կամ առհասարակ դաւառացի կինը՝ բաղդի բերմամբ փոքր ինչ հարբտանայով, սկսում է բարբարոտաբար սլլանդակ օտարախօսութիւնն ու անպատճառ «փրանցութանկայի» և «նեմիայի» է ման գալիս իրեն և իւր գաւակներին քաղաքակրթելու:

Ահա մի սուրբ և շատ վսեմ գործ, որի վրայ հրաւիրում ենք այն մեծախօս հայրենասէրների ուշադրութիւնը, որնք հեռուներումն են տեսնում իրենց հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւն արտայայտելու գործը: ձիշա է այստեղ ճաճան ճառերի և տրաքոցների տեղ չկայ, բայց սրբան համեսա, մեծ և բեղմնաւոր գործ է խիական աշխատաւոր մեղուների համար:

Церк. Вѣст. № 18 գրուած է հետևեալը.—

Հեռաւոր Արևելքում մեր զօրքերի շարքում պրաւօսլաւ, հնապաշտ (Старообрядецъ) և աղանդաւոր զինուորների հեա հաւատարմութեամբ և ճշմարտութեամբ ծառայում են կայսեր և հայրենիքին հաղարաւոր կաթոլիկ, բողոքական և այլադաւան զինուորներ: Պատերազմական գործողութիւնները սկզբից հարցյարուցուեց Հեռաւոր Արևելք ուղարկելու կաթոլիկ, բողոքական և մասմէդական հոգևորականներին, որպէս զի նրանք կարողանան կրօնական մխիթարութիւն և օգնութիւն հասցնել վիրաւոր և առողջ զինուորներին: Լրագիրները տուած տեղեկութիւնները համաձայն կաթոլիկ քահանան արդէն նշանակուած է բանակում և շուտով կը նշանակուի նաև բողոքական պատօրը: Բացի զբանից կարմիր խաչը հիւանդանոցներում կը նշանակուեն նաև լիտովցի ու կաթոլիկ երկու քահանաներ:

**ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ**

Կարոլիկ եկեղեցւոյ կանոնական իրաւունքի վերագնուրիւնք եւ կարգի բերելը:

Պիոս X պապը հրամայել է կարգի բերել կաթոլիկ եկեղեցւոյ կանոնական իրաւունքը, որը քրիստոնէութեան աւաջին դարերից սկսած՝ հասնում է մինչև մեր օրերը: Պապի այդ նպատակաւ հաստատած կարգիւնայնները մասնաժողովը

հազիւ թէ կարողանայ շուտով դուրս հանել այդ հսկայական աշխատանքը, կամ գոնէ նրա փոքրի շատէ զգալի մասը: Նա հարկադրուած կլինի ներկայ ժամանակին յարմարացնել միջին դարերի օրէնքներն, երբ եկեղեցին կռոււմ էր պետութեան հետ և երբ հողևորականութիւնն համարում էր իրեն աստուած-պետական օրինաց համաձայն՝ թագաւորներից բարձր: Կարգի-նալները մասնաժողովը ստիպուած կլինի դիմել կաթոլիկական զանազան երկիրների իրաւաբաններին, որովհետև ընդհանուր օրէնսդրութիւն կազմելու համար պէտք է ինկատի առնել գոյութիւն ունեցող կոնկորդատներն ու առանձնաշնորհումները:

Պիոս պապը մտադրուել է կատարել այնպիսի մի գործ, ինչպէս որ արաւ նապօղէօն I, բայց անհամեմատ և բազմիցս նրանից ծանր և դժուարին:

— Առանձին հանդիսով տօնուեց շոտլանդացի Պրիզորիոսի 1300) ամեակը մարտի 12-ին, երբ տօնում է այդ սուրբի յիշա-տակը: Ինչպէս Արարատում հաղորդել էինք, տօնի առթիւ մե-ծամեծ պատրաստութիւններ էին տեսնուած և բազմաթիւ զիանականներ հրաւիրուած էին առանձին դասախօսութիւն-ներով լուսաբանելու ս. Պրիզորի նշանակութիւնը կաթոլիկ եկե-ղեցու համար: Պիոս X պապն այդ առթիւ շրջաբերական հրա-տարակեց, որով նմանեցնում է Պրիզորի դործունէութեան շրջանը ներկայ ժամանակներին և գտնում, որ տարբերութիւնը մի միայն նրանումն է, որ այն ժամանակուայ մարդիկ կոպիտ և անկիրթ էին, իսկ այժմեանը թէև կիրթ, բայց կրօնապէս ընկած: Այնուհետև նկարագրելով ս. Պրիզորի դործունէութիւնը՝ 13 տարուայ եպիսկոպոսապետութեան ընթացքում ասում է, որ նա վերանորոգեց քրիստոնէական կեանքը, կարգի բերեց եկե-ղեցական գործերը և որոշ սահմանի մէջ դնելով քաղաքական յարաբերութիւններն իտալիայում, նրա պաշտպան և ազատա-բար եղաւ, որով անջնջելի և խորունկ հետք թողեց եկեղ-կեանքում նաև հետևեալ դարերի ընթացքում: Միջին դարերը Պրիզորեան կնիք են կրում, որովհետև նրանից են ստացել եկե-ղեցւոյ կառավարութեան կանոնները, քրիստոնէական բա-րեգործութեան ձևերը, քրիստոնէական ճգնութեան և կուսա-կրօնութեան կեանքի սկզբունքները, ինչպէս և ժամակարգու-թեան կարգաւորութիւնը: Այս բազմատեսակ գործունէութեան ժամանակ, պապի կարծիքով, բացի Աստուածային օժանդակու-թիւնից և իւր ընդունակութիւններից, Պրիզորիոսը գլխաւո-րապէս պարտական էր իւր ոգու անհաւատալի ոյժին, որ պահ-պանում և անդրդուելի էր մնում քրիստոնէական աւետօր և

եկեղեցու մէջ հանդէսող շնորհաց և ոյժին՝ խորապէս հաւատաւորի: Ահա այդ էր, որ նա իւր քարոզներով, խորհուրդներով և աղօթքներով աշխատում էր դարձնել հասարակաց երջանկութիւն:

Նրա օրինակը պատն իրեն համար ոգևորիչ է համարում և խրատական: Նա էլ՝ «նայելով Վատիկանի պարիսպների քարձունքները», չի կարող երկիւղ չզգալ, երբ տեսնում է, թէ որքան ամպեր են կիտուել և թշնամիներ հաւաքուել եկեղեցու շուրջը և նեղում նրան. և չկայ մարդկային մի միջոց նրանցից ազատուելու: Բայց նա էլ, Քրիզոստոսի նման մխիթարում է իրեն, յիշելով, որ գտնւում է եկեղեցու ուժեղ ամրոցում, որը հիմնուած է առաքեալների գլխաւորի վրայ և երբէք չի զրկուել իւր դերբնական ուժից:

Այդ հաւատով զինուած, նա անդորրութեամբ լսում է այն ձայները, որոնք կրկնում են, թէ կաթողիկե եկեղեցին արդէն անց է կացրել իւր դարը, որ նրա կարգերը թողնուած են յաւիտեան, որ նա ստիպուած կամ պէտք է հպատակուել գիտութեան պահանջներին և անտատուած քաղաքակրթութեան, կամ դադարի մարդկութեան հետ որեւէ յարաբերութիւն ունենալուց: Պատը հաւատացած է, որ եկեղեցին հարկաւոր է ոչ թէ յաւիտենական ժրհուժեան, այլ ժամանակաւոր քարեկեցութեան համար: Քրիզոստոսի օրինակին հետևելով, պատն՝ յայտարարում է, որ ամեն կերպ հաշխատել պահպանել այն իրաւունքներն ու առանձնաշնորհութիւնները, որոնց պաշտպան է հանդիսանում նուիրապետութիւնը Աստուծոյ և մարդկանց առաջ: Այժմս ուրիշ տեսակ թշնամիներ ճետ է հարկաւորում դորձ ունենալ: Քրիզոստոսի ժամանակն ուրիշ էր: Ազգերն այն ժամանակ կոպիտ էին և քաղաքակրթութիւնից «զուրկ, բայց այնուամենայնիւ ճշմարիտ կեանք էին որոնում. իսկ մեր քրիստոնէական քաղաքակրթութեամբ լուսաւորուած դարը, երես է դարձնում, զգուժ է այդ կեանքից և ուզում է ոչնչացնել նոյն իսկ նրա արմատը, մերժելով գերբնականի գոյութեան հնարաւորութիւնը: Սա մեր ժամանակի հիմնական մոլորութիւն է, որը մուտք է դորձել գիտութեան մէջ և առաջ է բերում պետական—հասարակական կեանքի ամենակործանիչ հետևանքներ: Բայց այս շարեաց դէմ կռուելու միջոցը նոյնն է մնում, ինչ որ Քրիզոստոսի ժամանակն էր. այն է հաւատ, որ ժրհուժիւնը Քրիստոսի մէջն է, Քրիստոսի, որ աղբիւր է ճշմարիտ կեանքի: Պէտք է աշխատել արձարձել ժողովրդի մէջ այդ գերբնական կեանքը, լուսաւորել նրա միտքը ճշմարտութեան քարո-

ըութեամբ, մուրուրութիւններն հերքելով և ներշնչելով քրիստոսնէական վարուց կանոնները: Պապը վճռականօրէն մերժում է և դատապարտում կեղծ միջոցներն, երևի ինկատի առնելով «կաթոլիկութեան վերանորոգութեան» դադարները, որոնց նպատակն է հաշտեցնել կաթոլիկութիւնը նոր ժամանակի հետ: Պիոս X պապն ասում է.

— Մուրուրում են նրանք, որոնք կարծում են, որ ծառայութիւն մատուցած կլինին եկեղեցուն և նպատած հոգիների փրկութեան, եթէ ընդարձակ զիջումներ անեն կեղծանուն զիտութեան՝ մի անդամայն անտեղի յուսալով, որ այդ շաւղով աւելի գիւրին կլինի մուրուրածներին կրկին հեշտութեամբ վերագարձնել, այնինչ այդպիսով իրօք ինքեանք են մուրուրում: Այսպէս էն և նոքա, որոնք զբաղուելով հասարակաց՝ մանաւանդ ժողովրդի երջանկութեան խնդիրներով, ամենեց շատ հոգս են անում կեանքի և մարմնի նիւթական ապահովութեան և լռում հոգևոր երջանկութեան մասին:

Երբեմն չեն ամաչում ծածկել Աւետարանի մի քանի հիմնական պատգամներն, երկիւղ կրելով, որ հակառակ դէպքում նրանց լսող չի լինիլ: Իհարկէ խոհեմութեան դէմ չէ ճշմարտութիւնն աստիճանաբար և մաս մաս առաջարկելը, մանաւանդ երբ մենք գործ ունինք միանդամայն անձանօթ և Աստուծուն օտար մարդկանց հետ, բայց երբ այդպիսի խոհեմութիւնը սովորական և մշտական գործունէութեան ձև է ստանում, նա մարմնական իմաստութիւն է դառնում, մանաւանդ որ դրանով նոսմանում է Աստուածային շնորհքը՝ որը բաշխում է ոչ միայն քահանայից, այլև բոլոր հաւատացեալներին: Այդպիսի խոհեմութիւնը Գրիգորեոսին յայտնի չէր. ընդհակառակն՝ նա թէ իւր քարոզներն և թէ գործունէութեան մէջ միշտ հետևում էր առաքեալներին, որոնք քարոզելու գնալիս յայտարարում էին. «մենք քարոզում ենք խաչեցեալ Յիսուսին, հրէից դայթակղութիւն և հեթանոսաց յիմարութիւն»։ չնայելով որ այն ժամանակ շատ ժամանակակից կըլինէր մարդկային իմաստութեան օժանդակութիւնը, որովհետև մարդկանց մաքերը պատրաստուած չէին այդչափ նոր վարդապետութիւն ընդունելու. վարդապետութիւն, որ հակառակ էր Յոյն-Հռոմէական քաղաքակրթութեան քարոզած մարդկային բոլոր կրքերին: Առաքեալներն այդ իմաստութիւնը խորթ և օտար էին համարում:

Գրիգորեան տօները կատարուել են Յարութեան շաբաթուայ ընթացքում մեծ հանդէսներով: Պապն ինքը պատարագել

է ս. Պետրոսի տաճարում, որանդ ներկայ է եղել 50,000 բազմութիւն, իսկ եկեղեցուց դուրս կաարդացուել են բազմաթիւ դասախօսութիւններ ս. Գրիգորիոսի գործունէութեան և նրա ժամանակաշրջանին նուիրուած:

— Գերմանիայում յետուսեանների վերաբերեալ օրինաց § 2-դ յօդուածի (երկրորդ պարագրաֆի) ոչնչացումից յետոյ՝ համարեա անմիջապէս վերացուել են և նախարարական բազմաթիւ շրջաբերական կարգադրութիւններ, որոնք հրատարակուել էին Հռովմի դէմ մղած «կուլտուրական կռուի» ժամանակ և որոնց նպատակն էր եղել կաթոլիկ եկեղեցու ազդեցութեան սահմանափակումը դպրոցներում: Նոր կարգադրութեամբ իրաւունք է տրուում դպրոցներում կրօնական միութիւններ և համախմբումներ կազմակերպելու դպրոցական վարչութեան և կրօնուսուցչի հսկողութեամբ: Այսպիսով մինչդեռ Ֆրանսիայում Վոմբի նախարարութիւնը մաքառում է միաբանութեանց ազդեցութեան դէմ յատկապէս դպրոցներում, Գերմանիան հէնց մի միայն այդ հանգամանքից օգուտ քաղելու նպատակաւ նորանոր իրաւունքներ է աւելիս կաթոլիկ եկեղեցուն նրա աջակցութիւնն իւր կողմն ունենալու և իւր քաղաքական ազդեցութիւնը կաթոլիկներին վրայ աւելի մեծ չափով տարածելու: — Խեղճ եկեղեցի, որ զիջումներ է ստանում և գործելու ասպարէզ է ձեռք բերում միմիայն քաղաքականութեան գործիք դառնալու և նրա հեռաւոր նպատակներին ծառայելու:

## ԲՈՂՈՒՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

Բողոքական համայնքների միութեան ձգտումը, որի հետևանքն եղաւ «Գերմանական աւետարանական եկեղեցական կօմիտէի» հիմնարկութիւնը, վերջին ժամանակներս երևան եկաւ նաև Ֆրանսիայում:

Ֆրանսիական բողոքականութեան չորս բաժանմունքները՝ «բողոքական եկեղեցիներին դիւաւոր սինօդը», «բողոքական ազատ եկեղեցիներին դիւաւոր միութիւնը», «Աւետարանական ազատ եկեղեցիներին ունիան» և «Աւետարանական մէթօդիստական եկեղեցին» ցանկանալով հրապարակաւ յայտնել Ֆրանսիական բողոքական եկեղեցիներին եղբայրական միութիւնը և ընդհանուր գործի յաջողութեան համար մի միացնող կապ հաստատել բողոքական եկեղեցիներին մէջ, որոշեցին կազմակերպել՝ Բողո-